

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

(...)

7) պետական միասնական գրանցամատյան (նաև գրանցամատյան)`
էլեկտրոնային փաստաթուղթ, որը պարունակում է սույն օրենքով նախատեսված
տեղեկությունները Հայաստանի Հանրապետությունում գրանցված
իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա
իրավաբանական անձանց հաշվառված բոլոր առանձնացված
ստորաբաժանումների և հիմնարկների, ~~օրենքով նախատեսված դեպքերում`
իրավաբանական անձանց իրական սեփականատերերի,~~ Հայաստանի
Հանրապետությունում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց,
ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների
վերաբերյալ.

(...)

~~23) իրական սեփականատեր` ֆիզիկական անձ, որը`~~

~~ա. առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ
տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք)
կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, այդ թվում` փայերին,
բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ
իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր իրավաբանական անձանց~~

կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին,

բ. վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ծայնից ավելի ծայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայի, այսուհետ՝ բաժնետոմս) կամ այլ արժեթղթերի միջոցով,

գ. ստանում է իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսը,

դ. իրավասու է նշանակելու կամ ազատելու իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց,

ե. իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ հնարավորություն ունի ազդելու իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկելու կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշելու իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի, օպցիոնի պայմանագրի, բաժնետոմսերի (բաժնեմասերի) փոխարկվող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով:

Սույն կետով սահմանված հիմքերով իրավաբանական անձին տիրապետելու, վերահսկելու կամ եկամուտ ստանալու դեպքերում քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական սեփականատեր՝ անկախ հսկողության, մասնակցության և եկամտի չափից:

24) քաղաքական ազդեցություն ունեցող անձ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք (բացառությամբ քննիչների), Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, վարչապետի գլխավոր խորհրդականի, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև նշված անձանց ընտանիքի անդամները, այն է՝ ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), նրա

~~խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձը:~~

25) ~~փոխկապակցված իրավաբանական անձինք՝ իրավաբանական անձինք,~~

~~ա. որոնցից մեկը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10 և ավելի տոկոսին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության 10 տոկոս հանրագումարին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու մյուսի որոշումները,~~

~~բ. որոնցից մեկի՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերեր) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց հետ փոխկապակցված անձինք իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուս անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսից ավելին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության 10 և ավելի տոկոս հանրագումարին կամ ունեն օրենքով չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,~~

ա. որոնցից մեկին ուղղակի կամ անուղղակի պատկանում է մյուսի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցությունը

բ. որոնցից մեկի կանոնադրական կապիտալում մասնակցության 20 և ավելի տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է ֆիզիկական անձին, որին ուղղակի կամ անուղղակի կերպով պատկանում է նաև մյուս իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցությունը

գ. որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

26) փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, եթե՝

ա. ֆիզիկական անձին ուղղակի կամ անուղղակի պատկանում է 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում.

բ. ֆիզիկական անձն օրենքով չարգելված այլ ձևով հնարավորություն ունի կանխորոշելու իրավաբանական անձի որոշումները.

գ. ֆիզիկական և իրավաբանական անձը գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

~~26) փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա հետ փոխկապակցված անձը հանդիսանում է՝~~

~~ա. — տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 10 տոկոս և ավելին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարը տնօրինող մասնակից,~~

~~բ. — օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,~~

~~գ. — տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ կառավարման այլ մարմինների անդամ.~~

~~27) փոխկապակցված անձինք՝ անձի ամուսինը, անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները.~~

27) փոխկապակցված ֆիզիկական անձինք՝ անձը և նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 և ավել օր համատեղ ընակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից»²

~~28) միջանկյալ իրավաբանական անձ՝ ընկերություն իրական սեփականատեր շրթայում գործող ցանկացած իրավաբանական անձ.~~

28) միջանկյալ անձ՝ իրավաբանական անձ-իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ իրավաբանական անձ չհանդիսացող այլ իրավաբանական կազմավորում.

(...)

Հոդված 6. Գրանցամատյանում պահվող տվյալների հրապարակայնությունը

-

1. Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկատվությունը հրապարակային է, բացառությամբ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների, սոցիալական քարտի համարի և նրանց բնակության հասցեների մասին տեղեկատվության:

2. Տեղեկատվությունը, ինչպես նաև գրանցամատյանից քաղվածքները տրամադրվում են սույն օրենքով նախատեսված կարգով:

Հոդված 6. Գրանցամատյանում պահվող տվյալների հրապարակայնությունը

1. Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկությունները հրապարակային են, բացառությամբ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների, սոցիալական քարտի համարի (ՀԾՀ), նրանց բնակության և հաշվառման հասցեների և կապի միջոցների մասին տեղեկությունների:

2. Տեղեկությունները, ինչպես նաև գրանցամատյանից քաղվածքները տրամադրվում են սույն օրենքով նախատեսված կարգով:

3. Անչափահասների վերաբերյալ գրանցամատյանում գրառված տեղեկությունները չեն հրապարակվում:

(...)

Հոդված 26. Իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունները

1. Իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառվում են հետևյալ տեղեկությունները.

(...)

24) տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀՕՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրական շահառուի շահերի բնույթը և ծավալը):

(...)

~~20. Օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձի վերաբերյալ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառվում են իրական սեփականատիրոջ վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.~~

~~1) ֆիզիկական անձի ինքնությունը հավաստող տվյալները՝ քաղաքացիությունը, անունը, ազգանունը (անձի անունը և ազգանունը նշվում են մաքս լատինատառ), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), հաշվառման հասցեն, բնակության վայրի հասցեն (հաշվառման հասցեից տարբերվելու դեպքում), աշխատանքի վայրի անվանումը (վայրերի անվանումները), աշխատանքի վայրի հասցեն (վայրերի հասցեները), կապի միջոցները.~~

~~2) միջանկյալ իրավաբանական անձի (անձանց) անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), պետական գրանցման համարը գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը.~~

~~3) իրավաբանական անձի (այդ թվում՝ միջանկյալ) կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության~~

~~իրավունքի — առկայության — կամ — իրավաբանական — անձի — նկատմամբ վերահսկողություն — իրականացնելու — լիազորության — մասին — տեղեկություններ՝ կատարելով~~

~~ա. — նշում — առանձին — կամ — փոխկապակցված — անձի — հետ — համատեղ իրավաբանական — անձի — կանոնադրական (բաժնեհավաք) — կապիտալի — առնվազն 10 — տոկոս — մասնակցության — կամ — քվեարկության — իրավունքի, — կամ — տարբեր իրավաբանական — անձանց — կանոնադրական — (բաժնեհավաք) — կապիտալում — մասնակցության — առնվազն — 10 — տոկոս — հանրագումարին — տիրապետելու վերաբերյալ՝ նշելով բաժնետոմսերի քանակը, բաժնետոմսերի տոկոսը և ձեռք բերելու ամսաթիվը,~~

~~բ. — նշում — իրավաբանական — անձին — կանոնադրական — (բաժնեհավաք) — կապիտալում — մասնակցություն — ունենալու — փաստի — ուժով — վերահսկելու — մասին՝ արտոնյալ — բաժնետոմսերի — կամ — մեկ — ձայնից — ավելի — ձայնի — իրավունք — տվող քվեարկող բաժնետոմսերի — կամ — այլ — արժեթղթերի միջոցով՝ նշելով բաժնետոմսերի քանակը, բաժնետոմսերի տոկոսը և ձեռք բերելու ամսաթիվը,~~

~~գ. — նշում — իրավաբանական — անձի — տարեկան — հասույթի — առնվազն — 15 — տոկոսի — չափով — ստացված — օգուտի — մասին,~~

~~դ. — նշում — իրավաբանական — անձի — կառավարման — մարմիններում — ընդգրկված — անձանց — նշանակելու — կամ — ազատելու — իրավասության — մասին,~~

~~ե. — նշում — իրավաբանական — անձի — կառավարման — մարմիններում — ընդգրկված — չլինելով՝ իրավաբանական — անձի — կառավարման — վրա — ազդելու, — կառավարումը — կամ — իրավաբանական — անձի — գործունեությունը — վերահսկելու — կամ — իրավաբանական — անձի — որոշումներն — այլ — միջոցներով — կանխորոշելու — հնարավորության — մասին (ներառյալ՝ գործարքներ կնքելու, — հավատարմագրային — կառավարման — պայմանագրի, — համատեղ — գործունեության — պայմանագրի — և — այլ — միջոցներով),~~

~~զ. — նշում — սույն — օրենքի — իմաստով — փոխկապակցված — անձ — հանդիսանալու — մասին (ներառյալ՝ նշում, — թե — ինչ — կարգով — է — հանդիսանում — փոխկապակցված — անձ):~~

~~4) իրավաբանական — անձի, — ինչպես — նաև — դուստր — և — կախյալ — ընկերությունների՝ ֆոնդային բորսայում — գրանցված — լինելու — դեպքում՝ ֆոնդային բորսայի — անվանումը՝ ներկայացնելով — համապատասխան — բորսաներում — առկա — փաստաթղթերի — հղումները:~~

5) պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության անվանումը, երեւոյթ իրավաբանական անձը համապատասխանաբար պետական, համայնքային մասնակցութեամբ կամ միջազգային կազմակերպութեան է՝ նշելով մասնակցութեան չափը և հսկողութեան մակարդակը:

21. Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում նշում է կատարվում իրավաբանական անձի (այդ թվում՝ միջանկյալ) իրական սեփականատիրոջ՝ Հայաստանի Հանրապետությունում բաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու մասին՝ նշելով տվյալ անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, կազմակերպութեան անվանումը:

22. Օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձը յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը, պետական ռեգիստր է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր (հայտարարագրեր)՝ ստորագրութեամբ հավաստելով հայտարարագրված տվյալների ճշգրտութեանը: Սույն հոդվածի 20-րդ մասով նախատեսված տեղեկութեանների փոփոխութեան դեպքում 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է պետական ռեգիստր ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկութեանները: Իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականութեան իրավունքի առկայութեան դեպքում հայտարարագրին կցվում են սեփականութեան իրավունքը հավաստող փաստաթղթերը՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված: Սույն մասով սահմանված հայտարարագիրը կամ իրական սեփականատերերի վերաբերյալ

փոփոխված տեղեկութեանները չներկայացնելու, կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու դեպքում ներկայացնողը ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվութեան: Հայտարարագրում ներառված իրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը:

23. Սույն հոդվածով նախատեսված իրական սեփականատերերի բացահայտման պահանջը չի տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող իրավաբանական անձանց վրա:

~~24. Սույն հոդվածի 22-րդ մասով նախատեսված հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը սահմանում է արդարադատության նախարարը:~~

~~25. Իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ պետական գրանցումն իրականացվում է սույն օրենքի 9-րդ գլխով սահմանված կարգով: Իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ պետական գրանցումը հավաստվում է պետական միասնական գրանցամատյանից տրված քաղվածքով, որն ուղարկվում է անձի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև հասանելի է դառնում համացանցում՝ տեղեկատվական համակարգում համապատասխան ծածկագիրը մուտքագրելու պայմանով: Անձի պահանջով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով համապատասխան վճար վճարելու պայմանով անձին կարող է տրվել քաղվածքի արտատպումը (պատճենը):~~

~~26. Իրական սեփականատիրոջ պետական գրանցումից հետո՝ երեք տարվա ընթացքում, իրավաբանական անձը պահպանում է իր հայտարարագրում նշված տեղեկությունները հավաստող փաստաթղթերը:~~

~~27. Իրավաբանական անձի իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության անձշտության ակնհայտ կեղծ կամ ոչ ամբողջական լինելու դեպքում գործակալությունն այդ մասին հաղորդում է ներկայացնում կեղծ կամ ոչ ամբողջական հայտարարագիր ներկայացնելու համար պատասխանատվություն կիրառող լիազոր մարմին:~~

(...)

Հոդված 39. Փոփոխությունների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը

1. Փոփոխությունների պետական գրանցման համար դիմողը գործակալություն է ներկայացնում՝

1) դիմում.

2) կանոնադրության փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին իրավասու մարմնի որոշումը.

3) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը)։

4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ։

2. Սույն օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում ներկայացվում են նաև նշված հոդվածով նախատեսված փաստաթղթերը։

3. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի փոփոխման (նշանակման, ընտրելու) դեպքում ներկայացվում են նաև՝

1) իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը (որոշումները) պետական գրանցում ստացած գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին.

2) գործադիր մարմնի նոր ղեկավարի մասին տեղեկություններ՝ անունը, ազգանունը և անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին տեղեկանքը, էլեկտրոնային փոստի հասցեն, բնակության, հաշվառման վայրի հասցեն։

~~3.1. Իրավաբանական անձի իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների գրառման դեպքում ներկայացվում են՝~~

~~1) իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր (հայտարարագրեր)։~~

~~2) իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում իրավասու մարմնի կողմից տրված (այդ թվում՝ օտարերկրյա) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված։~~

~~3) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ։~~

4. Տնտեսական ընկերությունները սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված տվյալների (կանոնադրական կապիտալի չափի նվազեցմամբ պայմանավորված) փոփոխությունը գրանցելու համար, սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերից բացի, ներկայացնում են նաև ընկերության գործադիր մարմնի ղեկավարի գրավոր հավաստումն այն մասին, որ ընկերությունը կանոնադրական կապիտալի նվազեցման և նրա նոր չափի մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացրել է ընկերության՝ իրեն հայտնի բոլոր պարտատերերին, որոնցից առարկություններ չեն ստացվել, կամ ընկերության պարտատերերի առաջացած բոլոր պահանջները բավարարվել են։

5. Իրավաբանական անձի գտնվելու վայրի փոփոխության դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը՝ իրավաբանական անձի գտնվելու վայրի նոր հասցեի գրանցման մասին: Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:

6" Իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը՝ իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի նոր հասցեի գրանցման մասին:

Պետական միասնական գրանցամատյանում իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի հասցեի մասին տեղեկությունների բացակայության դեպքում իրավաբանական անձը պարտավոր է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը գործակալություն ներկայացնել նշված տեղեկատվությունը:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:

(...)

ԳԼՈՒԽ 12.1

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ

Հոդված 60.1. Իրավաբանական անձանց իրական շահառուները

1. Սույն օրենքի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը:

2. Անձը համարվում է իրական շահառու, եթե նա «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված պայմանները բավարարում է առանձին կամ իր հետ փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ համատեղ:

3. Ոլորտային օրենսդրությամբ կարող են սահմանվել իրական շահառուների բացահայտման՝ «Փողերի լվացման և ահաբեկչության

ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով նախատեսված չափանիշներից խիստ չափանիշներ, եթե դա բխում է իրավաբանական անձի գործունեության ոլորտի առանձնահատկություններից կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

Հոդված 60.2. Իրավաբանական անձանց իրական շահառուների հայտնաբերումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր իրական շահառուների և իրավաբանական անձի կապիտալում նրանց շահերի բնույթի և ծավալի վերաբերյալ: Եթե իրական շահառուին անհնար է հայտնաբերել, ապա իրավաբանական անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իրական շահառուների հայտնաբերման անհնարինության վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար իրավաբանական անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի սկսած այն պահից, երբ անձը, ում դրանք առնչվում են, դադարում է լինել իրավաբանական անձի իրական շահառու: Սույն մասով նախատեսված փաստաթղթերն իրենց լիազորությունների իրականացման նպատակով ներկայացված պահանջի հիման վրա անմիջապես, բայց ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հասանելի են դարձվում գործակալությանը և պետական մարմիններին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև իրավաբանական անձի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց

ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Սույն մասով նախատեսված հարցում ստացած անձինք պարտավոր են քսան օրվա ընթացքում պատասխանել հարցմանը և հարցումն իրականացրած իրավաբանական անձին տրամադրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

4. Իրավաբանական անձի իրական շահառուները պարտավոր են իրենց իրական շահառուի կարգավիճակ ձեռք բերելու կամ իրենց առնչվող տվյալների փոփոխվելու պահից քսան օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձին և տրամադրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

Հոդված 60.3. Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձը պարտավոր է սույն օրենքով նախատեսված պատշաճ ուսումնասիրության արդյունքներով գործակալություն ներկայացնել իր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

2. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում ներառվում են տեղեկություններ՝

1) իրավաբանական անձի անունից հայտարարագիրը ներկայացնող անձի վերաբերյալ (անունը, ազգանունը և պաշտոնը).

2) իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման վերաբերյալ²

3) իրավաբանական անձն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման վերաբերյալ, ցուցակված բաժնետոմսերով իրավաբանական անձի վերաբերյալ (ներառյալ՝ գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), ինչպես նաև այսպիսի իրավաբանական անձի շահերի ծավալի վերաբերյալ²

4) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության ծավալների վերաբերյալ²⁾

5) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, բաղաբաղիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները՝ առկայության դեպքում, իրական շահառու դառնալու ամսաթիվը)²⁾

6) իրավաբանական անձի իրական շահառուի շահերի բնույթի և ծավալի վերաբերյալ (իրական շահառու հանդիսանալու հիմքերը և տվյալ հիմքերով իրավաբանական անձը տիրապետելու կամ այն վերահսկելու մակարդակը)²⁾

7) միջանկյալ անձանց վերաբերյալ (ներառյալ՝ գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), եթե հայտարարագրում կատարվել է նշում անուղղակի մասնակցության առկայության մասին²⁾

3. Ցուցակված բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունները կամ այնպիսի առևտրային կազմակերպությունները, որոնց ամբողջությամբ վերահսկում է ցուցակված բաժնետոմսերով մեկ այլ առևտրային կազմակերպություն, ներկայացնում են միայն սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված տեղեկությունները, եթե իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում, որտեղ իրական շահառուների բացահայտման չափանիշները համարժեք են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին:

4. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ենթակա է ներկայացման սույն օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի գրանցման պահից 40 օրվա ընթացքում: Իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխման դեպքում դրանք ենթակա են հայտարարագրման իրավաբանական անձին հայտնի դառնալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 40 օրվա ընթացքում:

5. Անկախ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետներից մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը՝ իրավաբանական անձը պարտավոր է գործակալություն ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագիրը պարունակում է արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ՝

2) փոփոխված տեղեկություններ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ:

6. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը սահմանում է արդարադատության նախարարը:

Հոդված 60.4. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցումը և հրապարակումը

1. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար գործակալություն է ներկայացվում իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

2. Իրական շահառուների փոփոխության գրանցման համար գործակալություն է ներկայացվում՝

1) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ նոր հայտարարագիրը՝

2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

3. Եթե իրավաբանական անձի իրական շահառուն օտարերկրյա ֆիզիկական անձ է, ապա պետական գրանցման համար, սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված փաստաթղթերից բացի, ներկայացվում է տվյալ անձի

անձնագրի կամ անձր հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված:

1.4. Մետաղական օգտակար հանածոի արդյունահանման ոլորտային պահանջների հիման վրա գործակալություն ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, բացառությամբ հրապարակային չհամարվող տեղեկությունների, հասանելի են տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից առանց պետական տուրք վճարելու:

Հոդված 60.5. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովումը

1. Գործակալությունն իրականացնում է ընթացիկ վերահսկողություն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով:

2. Պետական մարմինը, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության առնչությամբ հայտնաբերում է կասկածներ, այդ մասին անմիջապես ծանուցում է գործակալությունը:

3. Գործակալությունն իր նախաձեռնությամբ կամ դիմումի հիման վրա կարող է հարուցել վարույթ իրական շահառուների հայտարարագրման սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանումը ստուգելու նպատակով, իսկ խախտում հայտնաբերելու դեպքում՝ կիրառել օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

4. Սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելիս գործակալությունն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու և ստանալու իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձանց առնչվող տեղեկություններ, այդ թվում՝ հարկային և մաքսային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

5. Սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև եթե տեղեկությունների արժանահավատության առնչությամբ կասկածների առկայության դեպքում իրավաբանական անձր գործակալության պահանջով չի ներկայացնում իր հայտարարագրի հիմքում ընկած պատշաճ ուսումնասիրության փաստաթղթերը կամ դրանք բավարար չեն կասկածները փարատելու համար, գործակալությունը նյութերը եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում:

6. Սույն օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունը երեք տարի անընդմեջ չկատարելու, ինչպես նաև սույն գլխի կանոններն այլ կերպ բազմակի կամ կոպիտ խախտելու դեպքում գործակալությունը կարող է դիմել դատարան՝ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

17. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման ոլորտի կազմակերպությանը վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո եռօրյա ժամկետում գործակալությունն այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործման ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին:

(...)

Հոդված 61. Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկությունների տրամադրումը

1. Պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար: Պետական միասնական գրանցամատյանի տեղեկությունները և գրանցված իրավաբանական անձանց կանոնադրությունները հասանելի են տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից՝ օրենքով նախատեսված դեպքում պետական տուրքը վճարելու պայմանով: 1. Պետական միասնական գրանցամատյանի հրապարակային տեղեկությունները բաց են համընդհանուր ծանոթացման համար:

2. Առանց պետական տուրք վճարելու տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից հասանելի են իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ և պետական մարմնի վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանի հետևյալ տեղեկությունները՝

1) անունը, ազգանունը կամ անվանումը և կազմակերպատիրական ձևը

2) պետական գրանցման (հաշվառման) ամսաթիվը

3) պետական գրանցման (հաշվառման) համարը

4) հարկ վճարողի հաշվառման համարը

5) ձեռնարկության կողային դասակարգիչը (ՁԿԴ)

5) գտնվելու վայրը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն

6) իրավաբանական անձի իրական շահառուի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրավաբանական անձի կապիտալում շահերի բնույթը և ծավալը.

7) տեղեկություններ լուծարման գործընթացում գտնվելու մասին կամ հաշվառումից հանվելու մասին: Պետական միասնական գրանցամատյանի մասնակի տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը և կազմակերպատիրական ձևը, պետական գրանցման տարին, ամիսը, օրը, իրավաբանական անձի գրանցման համարը, իրավաբանական անձի կոդը, իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը, իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելը, իրական սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկատվությունը) տրամադրվում են առանց պետական տուրք վճարելու:

3. Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենները տրամադրվում են թղթային կրիչով կամ տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը կատարելուց հետո, իսկ սույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ առանց վճար վճարելու:

4. Գործակալության կայքից տեղեկատվական համակարգի միջոցով յուրաքանչյուր անձ կարող է իրականացնել իրավաբանական անձանց մասին

տեղեկությունների փնտրում՝ մուտքագրելով իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի հիմնադրի կամ մասնակցի անունը և ազգանունը, սոցիալական քարտի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, գրանցման համարը:

5. Անձի պահանջով մասնակի տեղեկությունները կամ ամբողջական տեղեկությունները էլեկտրոնային փաստաթղթի ձևով կամ թղթային կրիչի վրա գործակալության աշխատակցի հաստատած պատճենի ձևով կարող են տրամադրվել նաև գործակալության սպասարկման գրասենյակներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով վճար վճարելու պայմանով, իսկ սույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ առանց վճար վճարելու: Այդ դեպքում անձը ներկայացնում է տեղեկություններ ընկերության մասին (անվանումը կամ գրանցման համարը) և վճարի կատարումը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև ստորագրում է գործակալության կողմից կազմվող դիմումը:

6. Ամբողջական կամ մասնակի տեղեկությունները տրամադրում է գործակալությունը դիմումը ստանալուց հետո՝ անմիջապես:

7. Գործակալությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տեղեկություններ է տրամադրում իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների պետական հաշվառման մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան: Կոմիտեն գործակալությանը տրամադրում է տեղեկություններ հարկ վճարողների հաշվառման համարների մասին՝ «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 62. Միասնական պետական գրանցամատյանից տրվող՝ իրավաբանական անձի ամբողջական տեղեկություններ պարունակող քաղվածքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում տրվում են պետական գրանցումը (հաշվառումը) հավաստող, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրող իրավաբանական անձի մասին ամբողջական տեղեկություններ պարունակող միասնական ձևի քաղվածքներ:

2. Իրավաբանական անձի մասին ամբողջական տեղեկություններ պարունակող՝ միասնական պետական գրանցամատյանի քաղվածքների ձևերը սահմանում է արդարադատության նախարարը:

3. Իրավաբանական անձի մասին ամբողջական տեղեկություններ պարունակող՝ միասնական պետական գրանցամատյանից քաղվածքը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

1) իրավաբանական անձի անվանումը.

2) իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

3) պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը.

4) իրավաբանական անձի կոդը.

5) իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը.

6) իրավաբանական անձի սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարը (ապահովագրի ծածկագիրը).

7) իրավաբանական անձի՝ լուծարման գործընթացում գտնվելու կամ լուծարման մասին գրառման վերաբերյալ, ներառյալ՝ գրառումները կատարելու տարին, ամիսը, օրը.

8) իրավաբանական անձի գտնվելու վայրը.

9) իրավաբանական անձի գործունեության ժամկետը (անժամկետ, իսկ որոշակի ժամկետի դեպքում նշելով դրա ավարտի տարին, ամիսը և ամսաթիվը).

10) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի (տնօրեն, գլխավոր տնօրեն, նախագահ, գործերը վարող և այլն) կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրավաբանական անձին ներկայացնելու իրավունք ունեցող այլ անձի անունը, ազգանունը).

11) իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը.

12) իրավաբանական անձի մասնակիցների մասին տեղեկություններ (անունը, ազգանունը՝ ֆիզիկական անձանց համար, անվանումը, պետական գրանցման համարը և ՀՎՀՀ իրավաբանական անձանց համար, մասնակից դառնալու տարին, ամիսը, օրը, բաժնեմասի (մասնակցության) չափը, բաժնեմասի

փոփոխությունների տարին, ամիսը, օրը, մասնակցության դադարման ամիսը, տարին, օրը).

~~12.1) սույն օրենքի 26-րդ հոդվածի 20-րդ մասով սահմանված տեղեկություններ իրական սեփականատիրոջ մասին (օրենքով իրական սեփականատիրոջ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում).~~

13) իրավաբանական անձի գրանցումից մինչև քաղվածքի տրման պահը կատարված փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը՝ կողերի նշումով, և փոփոխությունների տարին, ամիսը, օրը.

14) քաղվածքի տրամադրման տարին, ամիսը, օրը.

15) սույն օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

(...)

Հոդված 66. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով տրամադրվող տեղեկությունները
Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակներով հավաքված տեղեկատվությունը

1. Գործակալությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազոր մարմնին է տրամադրում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն այդ օրենքով սահմանված կարգով: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակներից ելնելով՝ 20 միլիոն դրամը գերազանցելու դեպքում առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում և այլն) բաժնի (մասնակցության) օտարման (ծեռք բերելու) կամ կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի և այլն) ձևավորման կամ փոփոխության դեպքում առևտրային կազմակերպության (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում ռեզոնիցիլացված)՝ ներդրում կատարող կամ գործարքի կողմ համարվող

~~մասնակիցը գործակալություն է ներկայացնում հայտարարագիր, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները:~~

~~1) կանոնադրական կապիտալում ներդրում կատարող մասնակցի, լիազորված անձի, իրական շահառուի տվյալները, ներառյալ՝~~

~~ա. ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաշվառված անձ համարվող մասնակցի, լիազորված անձի, իրական շահառուի համար՝ անունը, ազգանունը, բնակության, հաշվառման վայրը, ծննդյան թվականը, ամիսը, ամսաթիվը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին և համապատասխան տեղեկանքի համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը և անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը,~~

~~բ. իրավաբանական անձ համարվող մասնակցի, լիազորված անձի, իրական շահառուի համար՝ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը:~~

~~2) ներդրման չափը:~~

~~3) ներդրման արդյունքում կանոնադրական կապիտալի չափը:~~

~~4) ներդրումը կատարելու ամսաթիվը:~~

~~5) կասկածելի ներդրումների դեպքում՝ կասկածելի համարելու հիմքը, չափանիշը և դրանց նկարագրությունը:~~

~~2. Գործակալությունը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:~~

~~3. Իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեկ օրինակը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս պահանջով: Իրական շահառուի վերաբերյալ հայտարարության ակնհայտ կեղծ կամ թերի~~

~~մերկայացման ղեկքում գործակալությունն այդ մասին հաղորդում է
մերկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:~~